ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-669-02.10.2023-ՖՎ, ԱՍ, ՏՀ, Առհ, ՏՏԳԾ, ՏԵ, ՊԻ, ԱՀ, ՊԱ, ԳԿ, ԵԻ, ՄԻ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-669-02.10.2023-ՖՎ, ԱՍ, ՏՀ, Առհ, ՏՏԳԾ, ՏԵ, ՊԻ, ԱՀ, ՊԱ, ԳԿ, ԵԻ, ՄԻ-011/0) (այսուհետ՝ Նախագիծ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագիծը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը.

1. Նախագծի մի շարք հոդվածներում կիրառվում է «դրամ» հասկացությունը, իսկ Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության դրամ» հասկացությունը: Նախագծի ամբողջ տեքստում առաջարկում ենք միևնույն միտքն արտահայտելիս կիրառել միևնույն բառերը՝ որոշակի հերթականությամբ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված պահանջը՝ «*Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ.*»: Առաջարկում ենք Նախագծի ամբողջ տեքստում կիրառել «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքի 3-րդ հոդվածի չհամարակալված 1-ին պարբերության 1-ին կետի «ա» ենթակետում սահմանված հասկացությունը, այն է՝ «*Հայաստանի Հանրապետության արժույթը՝ Հայաստանի Հանրապետության դրամը.*», հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը՝ «*Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ.*»

2. Նախագծի 5-րդ հոդվածում կիրառվում է «Հայաստանի Հանրապետության կառավարություն» հասկացությունը, մինչդեռ «Հայաստանի Հանրապետության կառավարություն» հասկացության կրճատ տարբերակը՝ «(այսուհետ՝ Կառավարություն)», սահմանված է Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասում: Հարկ ենք համարում նշել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված է հետևյալ իրավակարգավորումը՝ «*Նորմատիվ իրավական ակտում հաճախակի կիրառվող երկար արտահայտությունները նույն նորմատիվ իրավական ակտում կարող են սահմանվել կրճատ տարբերակով՝ իրավական ակտում* ***<u>առաջին իսկ կիրառումից</u>*** *հետո նախատեսելով կամ տվյալ արտահայտության սահմանումը, կամ փակագծերում նշելով կրճատ տարբերակը.*»: Այսպես՝ հաճախակի կիրառվող երկար արտահայտության կրճատ տարբերակը նախ պետք է սահմանել 1-ին իսկ կիրառումից հետո: Հիմք ընդունելով վերոգրյալն, ինչպես նաև Սահմանադրությամբ սահմանված հասկացությունը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը՝ առաջարկում ենք Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասում չսահմանել քննարկվող

հասկացության կրճատ տարբերակը, Նախագծի ամբողջ տեքստում «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով, փոխարինել «Կառավարություն» բառով՝ համապատասխան հոլովաձևերով:

3. Հարկ ենք համարում նկատել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ նորմատիվ իրավական ակտում կարող է կիրառվել կա՛մ «և», կա՛մ «կամ» շաղկապը, միչդեռ «և (կամ)» գրելաձևը կիրառելի չէ: Նշվածով պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի ամբողջ տեքստում վերանայել քննարկվող շաղկապների կիրառությունը:

4. Նախագծի 9-րդ հոդվածի 12-րդ մասի 2-րդ կետում կիրառված բոլոր «սույն ենթակետում» բառերն առաջարկում ենք փոխարինել «սույն կետում» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը, այն է՝ «*Օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի.*»:

5. Նախագծի 9-րդ հոդվածի 12-րդ մասի 4-րդ կետում նշված «23-րդ հոդվածի 1-ին կետին» ձևակերպումն առաջարկում ենք փոխարինել «23-րդ հոդվածի 1-ին մասին» ձևակերպմամբ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծով սահմանված իրավակարգավորումներում Սահմանադրության տեսանկյունից խնդրահարույց նորմեր առկա չեն:

Միաժամանակ, հաշվի առնելով Նախագծի առանձնահատկությունները, ներկայացված դիտարկումների հիման վրա, կարծում ենք՝ անհրաժեշտ է ապահովել Նախագծով սահմանված կարգավորումների համապատասխանությունը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ

(հեռ.՝ 011-513-248)

10.10.2023թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ

(հեռ.՝ 011-513-248)

10.10.2022թ.

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

«Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ նաև Նախագիծ) քննարկվել է ՀՀ ԱԺ աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության ֆինանսատնտեսագիտական փորձաքննության բաժնում:

Նախագիծը հիմնականում համապատասխանում է ՀՀ Սահմանադրությամբ, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև բյուջետային հարաբերությունները կարգավորող մյուս օրենքներով սահմանված պահանջներին:

Նախագծի ուսումնասիրության և քննարկման արդյունքում ձևավորվել են մի շարք նկատառումներ, որոնցից հիմնականները կայանում են հետևյալում:

1. Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետի, բացատրագիրը պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը հիմնավորող փաստաթղթերի ամբողջություն է, որը ներառում է պետական բյուջեի մասին օրենքի նախագծով նախատեսված եկամուտների հիմնավորումը՝ ըստ օրենքով սահմանված հարկային և այլ եկամտատեսակների: Նույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ պետական բյուջեի եկամուտների աղբյուրներն են հարկային եկամուտները, պետական տուրքերը, պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտները, իսկ 2-րդ մասով ներկայացված են հարկային եկամուտները՝ ավելացված արժեքի հարկ, ակցիզային հարկ, շահութահարկ, եկամտային հարկ և այլն: Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ 2024 թվականի պետական բյուջեի ուղերձում բացակայում են առանձին հարկատեսակների գծով կանխատեսվող ցուցանիշներն ու դրանց հիմնավորումները, ինչպես նաև առաջիկա տարում պլանավորվող հարկային եկամուտների բացվածքը: Ի դեպ, դրան զուգահեռ, բավականաչափ մանրամասնեցված են ներկայացված պետական տուրքերի աճը պայմանավորող գործոնները և կանխատեսումները: Մեր կարծիքով, նշված իրավիճակը ոչ միայն չի բխում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի վերը նշված հոդվածների պահանջներից, այլև հակասում է բյուջետային ուղերձի տրամաբանությանն ու նպատակային նշանակությանը:

2024 թվականին բարձր տնտեսական աճի պայմաններում կառավարությունը նախատեսում է իրականացնել հարկային վարչարարության բարելավմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև հարկային օրենսդրության բարեփոխումներ: Վերջիններիս արդյունքում ակնկալվում է ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության շուրջ 0.8 տոկոսային կետով բարելավում, որի արդյունքում այն կկազմի ՀՆԱ-ի 24.4%-ը: Այս առումով, 2024 թվականի բյուջետային ուղերձում առանձին հարկատեսակների գծով կանխատեսումների, ինչպես նաև հարկային եկամուտների ակնկալվող աճի բացվածքի և այն պայմանավորող գործոնների վերլուծության բացակայությունը թույլ չի տալիս լիարժեք և ամբողջական կերպով գնահատել և պատկերացում կազմել ինչպես նախատեսվող վարչարակական միջոցառումների արդյունավետության, հարկաբյուջետային ցուցանիշների փոփոխության միտումների, այնպես էլ պլանավորվող ցուցանիշների իրատեսականության և արժանահավատության վերաբերյալ: Հետևաբար, կարծում ենք, որ բյուջետային փաստաթղթի ամբողջականության ապահովումը ենթադրում է վերը նշված

կանխատեսումների համակողմանի և մանրակրկիտ ներկայացում, ինչն էլ, ցավոք, բացակայում է:

2. Առաջիկա տարում հանրապետության տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների գծով կանխատեսումները, կարծում ենք, կարելի է հուսադրող համարել այն առումով, որ նկատվում է վերջին տարիներին արձանագրված ճգնաժամայի երևույթների տնտեսական հետևանքների հաղթահարման միտումների ձևավորում, թեև մյուս կողմից՝ գնաճային ցուցանիշների աճը ստիպում է հատուկ ուշադրություն դարձնել տնտեսական աճի և հատկապես ՀՆԱ-ի աճի որակական կողմին (տես աղյուսակ 1-ը):

Աղյուսակ 1.

Մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների դինամիկան 2020-2024 թվականներին

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ	2020	2021	2022	2023	2024
	Փաստ			սպասում	ծրագիր
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	6,181.9	6,991.8	8,501.4	9,432.5	10,496.5
Տնտեսական աճ, %	-7.2	5.8	12.6	7.2	7.0
ՀՆԱ դեֆլյատորի աճ, %	1.8	6.9	8.0	3.5	4.0
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ), %	3.7	7.7	8.3	0.4	4.0
Գնաճ (միջին), %	1.2	7.2	8.6	2.2	3.2

Մասնավորապես, ըստ ՀՀ կառավարության կանխատեսումների, անվանական ՀՆԱ-ն 2024 թվականին կկազմի մոտ 10.5 տրլիոն դրամ, որը մոտ 10.6 տոկոսով գերազանցում է ընթացիկ տարվա կանխատեսվող մակարդակը (1.0 տրիլիոն դրամ) և 23.5 տոկոսով՝ նախորդ տարվա փաստացի մակարդակը (մոտ 2 տրիլիոն դրամ): Ըստ կանխատեսումների, 2024 թվականին տնտեսական աճի տեմպը կդանդաղի և 2023 ակնկալվող 7.2 տոկոսի դիմաց կկազմի 7 տոկոս:

Ինչպես և նախորդ երկու տարիներին, 2024 թվականի համար տնտեսական աճը զգալիորեն պայմանավորված է լինելու արտաքին գործոններով, ինչպես նաև գնաճային ցուցանիշների համեմատաբար բարձր մակարդակներով, որոնք էլ «թելադրում» են տնտեսական աճի որակական հիմնական բնութագիրը: Մասնավորապես, 2022թ. փետրվարի վերջերից սկիզբ առած ռուս-ուկրաինական հակամարտության և Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցների հետևանքով դեպի Հայաստան մարդկանց ներհոսքի, զբոսաշրջության զգալի ավելացման և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների ՀՀ տեղափոխման, ինչպես նաև պատժամիջոցների հետևանքով որոշ երկրներից ՌԴ ներմուծման շուկայի սահմանափակումների

պայմաններում ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացման արդյունքում տնտեսական ակտիվության աճի տեմպերը կտրուկ արագացան, հատկապես՝ ծառայությունների ոլորտում, ինչի արդյունքում 2022 թվականին գրանցվեց 12.6% տնտեսական աճ: Իսկ 2023 թվականին ակնկալվող 7.2 տոկոս տնտեսական աճը նույնպես զգալիորեն պայմանավորված կլինի սպասվող արտաքին տնտեսական միջավայրով և, մասնավորապես, վերը նշված գործոններով: Այս առումով, կարելի է նշել, որ 2024 թվականի համար կանխատեսվող տնտեսական աճի ցուցանիշը հիմնականում կախված կլինի արտաքին գործոնների ազդեցությունից, ինչը պարունակում է որոշակի ռիսկեր: Ի դեպ, Կառավարության կողմից արտաքին միջավայրից բխող տնտեսական աճը կրճատող ռիսկերից առանձնացվում են ռուս-ուկրաինական հակամարտության և Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցների հետևանքով ՌԴ տնտեսության սպասվածից ավելի ցածր աճը, ինչպես նաև դեպի Հայաստան ՌԴ-ից տեղի ունեցած մարդկանց և կապիտալի զգալի ներհոսքի հետշրջումը: Կարծում ենք, որ տնտեսական աճը պայմանավորող գործոնների տեսանկյունից իրավիճակը կարող է մտահոգիչ ներկայանալ այն առումով, որ հնարավոր ռիսկերի դրսևորման (ինչի հավանականությունը փոքր չէ) պարագայում կգրանցվի ավելի փոքր տնտեսական աճ՝ ինչն էլ, իր հերթին, կանդրադառնա կանխատեսվող բյուջետային եկամուտների ու ծախսերի վրա: Կարծում ենք, նման իրավիճակում նպատակահարմար կիներ նախատեսել եկամտի լրացուցիչ աղբյուրներ՝ տնտեսական աճի կանխատեսվող ցուցանիշի չապահովման դեպքում բյուջետային մուտքերի գծով «ճեղքվածքը» ծածկելու համար, քանի որ կանխատեսվող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների ապահովումը մեծապես պայմանավորված կլինի արտաքին գործոններով:

Միևնույն ժամանակ, տնտեսական աճի կանխատեսվող մակարդակի ապահովումը որոշակի հիմք կհանդիսանա հետճգնաժամային փուլում տնտեսության վերականգնման ու զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորման և հարկաբյուջետային ցուցանիշների բարելավման համար:

3. Տնտեսական աճի կանխատեսվող ցուցանիշի ապահովումը, բացի ռուս-ուկրաինական հակամարտությամբ պայմանավորված գործընթացներից, կախված կլինի նաև երկրում իրականացվող տնտեսական քաղաքականությունից, ինչպես նաև արտաքին տնտեսական այլ գործոններից և համաշխարհային տնտեսության զարգացումներից: Համաձայն 2024 թվականի բյուջետային ուղերձի, առաջիկա տարում արդյունաբերությունը կաճի 4.7 տոկոսով, գյուղատնտեսությունը՝ 3.2 տոկոսով, ծառայությունների ոլորտը՝ 7.9 տոկոսով, շինարարության ոլորտը՝ 8.9 տոկոսով: Կարծում ենք, տնտեսական աճի ճյուղային կառուցվածքը շարունակում է

մտահոգիչ մնալ՝ հատկապես դրա որակի բարելավման տեսանկյունից: Կառավարության գնահատականների համաձայն. «2024 թվականին տնտեսական աճը պայմանավորված կլինի հիմնականում ծառայությունների և արդյունաբերության ճյուղերի աճով: Տնտեսության մյուս ճյուղերը նույնպես դրական ազդեցություն կունենան տնտեսական աճի վրա: Ամբողջական պահանջարկը ևս կաճի՝ պայմանավորված ներքին սպառողական և ներդրումային պահանջարկի, ինչպես նաև արտահանման (հատկապես՝ ծառայությունների արտահանման մասով) աճով:»: Ըստ էության, նման լավատեսական կանխատեսումների հիմք են հանդիսացել 2023 թվականին ձևավորված իրողությունները և դրանց նպաստած գործոնները: Մասնավորապես, 2023 թվականին սպասվում է 7.2% տնտեսական աճ, ինչը հիմնականում պայմանավորված կլինի ծառայությունների (ներառյալ առևտուրը) և շինարարության, համապատասխանաբար՝ 17. 6% և 8.3% առաջանցիկ աճերով: Արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերը նույնպես կաճեն (համապատասխանաբար՝ 0. 8% և 1.2%)՝ դրական նպաստելով տնտեսական աճին:

Տնտեսության ճյուղային կառուցվածքի առումով, Կառավարության հիմնական առաջնահերթություններից մեկը, կարծում ենք, պետք է դառնա դրա փոփոխությանն ուղղված գործնական քայլերի իրականացումը: Մեր կարծիքով, իրականացվելիք տնտեսական քաղաքականության նպատակային թիրախներ պետք է դառնան հարկունակ ճյուղերի զարգացումը, միաժամանակ՝ համեստ դերակատարում վերապահելով հարկազատված ոլորտներին: Այլ կերպ ասած, կարևորելով երկրում տնտեսական աճի ապահովումը, միևնույն ժամանակ, պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկել ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքի բարելավման ուղղությամբ, ինչը կնպաստի հարկային բեռի հնարավորինս օպտիմալ բաշխմանը և, դրանով իսկ, բյուջետային եկամուտների ավելացմանը:

4. Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի նախագծում եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 2 տրիլիոն 676.1 մլրդ դրամի չափով, 2023 թվականի սպասվող 2 տրիլիոն 365.6 մլրդ դրամի, 2022 թվականի փաստացի 2 տրիլիոն 063.1 մլրդ դրամի դիմաց: Այլ կերպ ասած, առաջիկա տարվա բյուջետային եկամուտների պլանավորված ծավալն ընթացիկ տարվա ցուցանիշը գերազանցում է 13.1 տոկոսով կամ 312.5 մլրդ դրամով (տես աղյուսակ 2-ը):

Աղյուսակ 2.

Բյուջետային եկամուտների աճի դինամիկան 2020-2024 թվականներին

Ցուցանիշներ	Փաստ			Սպասում	Կանխատեսում
	2020	2021	2022	2023	2024
Պետական բյուջեի եկամուտներ	1,560.7	1,683.8	2,063.1	2,365.6	2,676.1
1. Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,385.2	1,586.9	1,926.0	2,235.4	2,566.4
2. Այլ եկամուտներ	122.2	84.6	122.1	113.0	87.3
3. Պաշտոնական դրամաշնորհներ	53.2	12.4	15.0	17.2	22.5

Ակնկալվում է, որ 2024 թվականին հարկային բեռի ծանրությունը բնութագրող հիմնական՝ հարկային եկամուտներ և տուրքեր/ՀՆԱ ցուցանիշը կկազմի 24.4 տոկոս՝ ընթացիկ տարվա սպասվող 23.7 և 2022 և 2021 թվականների փաստացի 22.7 տոկոսի դիմաց: Բնականաբար, 2024 թվականին բյուջետային մուտքերի կազմում ամենամեծ տեսակարար կշիռ կունենան հարկերը և պետական տուրքերը՝ 2 տրիլիոն 566.4 մլրդ դրամ՝ 2023 թվականին սպասվող 2,235.4 մլրդ դրամի, 2022 թվականի, 2021 թվականի և 2020 թվականի փաստացի մուտքերի համապատասխանաբար՝ 1 տրիլիոն 926.0 մլրդ դրամի, 1 տրիլիոն 586.9 մլրդ դրամի և 1 տրիլիոն 385.2 մլրդ դրամի դիմաց:

Պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտները կապահովեն տարեկան բյուջետային մուտքերի համապատասխանաբար՝ 22.5 մլրդ. դրամը և 87.3 մլրդ դրամը (ընդհանուր եկամուտների համապատասխանաբար 0.8%-ը և 3.3%-ը): Հարկ է նշել, որ պետական բյուջեի եկամտային կառուցվածքում բոլոր եկամտատեսակների գծով տեղի կունենա անվանական աճ, բացառությամբ այլ եկամուտների, որոնք կնվազեն 1.3 անգամ:

5. Համաձայն Նախագծի, ինչպես արդեն նշեցինք, առաջիկա տարում 7.0 տոկոս տնտեսական աճի պարագայում կանխատեսվում է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության 24.4% մակարդակ (ընթացիկ տարվա համեմատ ընդամենը 0.7 տոկոսային կետով աճ), 2023 թվականին՝ 7.2 տոկոս տնտեսական աճի սպասողականի պարագայում կանխատեսվում է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության 23.7% մակարդակ (որը 2022 թվականի մակարդակը գերազանցում է 1.0

տոկոսային կետով), իսկ 2020 թվականին, չնայած փաստացի 7.2 տոկոս տնտեսական անկմանը, հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը փաստացի կազմել է 22.4% (տես աղյուսակ 3-ը):

Աղյուսակ 3.

Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը և տնտեսական աճը 2020-2024 թվականներին

Ցուցանիշներ	Փաստ			Սպասում	Կանխատեսում
	2020	2021	2022	2023	2024
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր/ՀՆԱ (%)	22.4	22.7	22.7	23.7	24.4
Տնտեսական աճ, %	-7.2	5.8	12.6	7.2	7.0

Առաջին հայացքից տպավորություն է ստեղծվում, որ հանրապետությունում առկա է հարկային եկամուտների հավաքագրման կայուն և թեկուզ ցածր, բայց աճի կայուն դինամիկա, ինչն էլ պետության հարկային քաղաքականության առումով և հարկային դրույքաչափերի անփոփոխության պարագայում իդեալականին մոտ պատկեր է իրենից ներկայացնում: Այսինքն, եթե միջինժամկետ հատվածում տեղի չեն ունեցել հարկային դրույքաչափերի բարձրացումներ կամ հարկային բազայի էական ընդլայնում, ապա միանգամայն տրամաբանական և հիմնավորված է պնդել, որ այս տարիների ընթացքում ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների և պետական տուրքերի հարաբերակցությունը կարող էր աճել հիմնականում տնտեսական աճի, ստվերային շրջանառության կրճատման և հարկային վարչարարության բարելավման ազդեցությամբ: Սակայն վերը նշված տվյալների դինամիկան փաստում է, որ 2020 և 2021 թվականներին, համապատասխանաբար՝ 7.2% տնտեսական անկման և 5.7% տնտեսական աճի պարագայում հարկեր/ՀՆԱ հարաբերակցության տարբերությունը կազմել է ընդամենը 0.3 տոկոսային կետ, ընթացիկ և առաջիկա տարիների համար կանխատեսվում է, որ 7.2% և 7.0% տնտեսական աճի պարագայում սպասվում է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության համապատասխանաբար՝ 23.7% և 24.4% մակարդակ: Սա նշանակում է, որ տնտեսական աճի և հարկեր/ՀՆԱ հարաբերակցության փաստացի և կանխատեսված ցուցանիշները, 2020-2024թթ. ժամակահատվածի կտրվածքով, առնվազն տրամաբանական կապի մեջ չեն գտնվում, ուստի նկարագրված դինամիկան, կարծում ենք, մանրամասն և փաստարկված բացատրության կարիք է զգում, ինչն էլ, ցավոք, բացակայում է պետական բյուջեի նախագծի բացատրագրում (ի դեպ, նման

գնահատման նպատակ էր հետապնդում նաև սույն եզրակացության 1-ին կետում ներկայացված նկատառումը՝ հարկային եկամուտների մանրամասնեցված ներկայացման վերաբերյալ):

Միաժամանակ, հարկեր/ՀՆԱ ցուցանիշի հարաբերականորեն ցածր մակարդակն էականորեն սահմանափակում է պետության ծախսային պարտավորությունների ընդլայնման հնարավորությունները և, այս տեսանկյունից, առաջիկա տարիներին դրա աստիճանական բարձրացումը, կարծում ենք, պետք է դառնա ընդհանուր տնտեսական քաղաքականության հիմնական նպատակներից մեկը: Ընդ որում, այն պետք է իրականացվի ինչպես համախառն ներքին արդյունքի ճյուղային կառուցվածքի բարելավման, այնպես էլ տնտեսության հարկային ներուժի լիարժեք օգտագործման և հատկապես ստվերային հատվածի կրճատման ուղղություններով:

Այս առումով, կարծում ենք, որ հանրապետությունում իրականացվելիք տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի ոչ միայն տնտեսական աճի կայուն տեմպերի ապահովմանը, այլև տնտեսական աճի կառուցվածքի և որակի բարելավմանը՝ առաջնահերթ ուշադրություն դարձնելով հարկունակ ճյուղերի զարգացման վրա:

6. Հարկային ծախսերը գործող հարկային արտոնությունների հետևանքով պետական բյուջե չգանձվող (պակաս գանձվող) հարկային եկամուտները կամ այդ եկամուտների չափով պետության կրած այլընտրանքային ծախսերն են, քանի որ հարկային ծախսերը հանգեցնում են համապատասխան գումարի չափով բյուջետային եկամուտների կրճատման: Հարկային ծախսերի գնահատումը շատ կարևոր նշանակություն ունի ոչ միայն պետական բյուջեի պլանավորման, այլև հարկային քաղաքականության մշակման, իրականացման և համապատասխան ճշգրտումների կատարման տեսանկյունից, ուստի հարկային ծախսերի հաշվետվության, որպես ինստիտուտի, ներդրման և շարունակական թարմացման գործընթացը բացառիկ կարևորություն է ստանում: 2024 թվականին ընդհանուր հարկային ծախսը գնահատվել է 681,3 մլրդ դրամի չափով, ինչը 2024 թվականի համար կանխատեսված հարկային եկամուտների և ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է համապատասխանաբար՝ 26.5 և 6.5 տոկոս (տես աղյուսակ 4-ը): Այն 96,6 մլրդ դրամով կամ 16.5 տոկոսով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը: Ավելացված արժեքի հարկի գծով հարկային ծախսերը գնահատվել են 486,4 մլրդ դրամ, ինչը 76,5 մլրդ դրամով կամ 18.7 տոկոսով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը: Շահութահարկի գծով հարկային ծախսերը գնահատվել են 94,3 մլրդ դրամ, ինչը 12,9 մլրդ դրամով կամ 15.8 տոկոսով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը: Եկամտային հարկի գծով հարկային

ծախսերը գնահատվել են 100,5 մլրդ դրամ, ինչը 7,2 մլրդ դրամով կամ 7.7 տոկոսով ավելին է, քան նախորդ տարվա գնահատականը:

Աղյուսակ 4.

Հարկային ծախսերի գնահատականը 2024 թվականին (մլն դրամ)

Հ/Հ	Հարկային ծախսերի տեսակը	Հարկային ծախսերի չափը	Կշիռը հարկային եկամուտների մեջ	Կշիռը ՀՆԱ-ի մեջ
1	ԱԱՀ-ի գծով, այդ թվում՝	486,442	18.95%	4.63%
1.1.	*գյուղատնտեսություն*	18,902	*0.74%*	*0.18%*
1.2.	*առողջապահություն*	82,365	*3.21%*	*0.78%*
1.3.	*կրթություն*	37,237	*1.45%*	*0.35%*
1.4.	*ֆինանսներ և ապահովագրություն*	164,070	*6.39%*	*1.56%*
1.5.	*ԱԱՀ-ի շեմ*	75,162	*2.93%*	*0.72%*
1.6.	*խաղատների գործունեություն, շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի), տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպում*	42,548	*1.66%*	*0.41%*
1.7.	*ոսկու և թանկարժեք քարերի իրացում*	4,208	*0.16%*	*0.04%*
1.8.	*մարդասիրական օգնություն*	7,068	*0.28%*	*0.07%*
1.9.	*պարարտանյութերի իրացում*	6,253	*0.24%*	*0.06%*
1.10.	*ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի օտարում*	1,257	*0.05%*	*0.01%*

1.11.	*սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարում, աշխատանքի կատարում և (կամ) ծառայության մատուցում*	504	*0.02%*	*0.00%*
1.12.	*ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցումը, ազատ տնտեսական գոտու կազմակերպչի և ազատ տնտեսական գոտու շահագործողի համար աշխատանքների կատարումը, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարում*	665	*0.03%*	*0.01%*
1.13.	*Օրենսգրքով սահմանված վերը չնշված այլ արտոնություններ*	12,899	*0.50%*	*0.12%*
1.14.	*այլ օրենքներով տրված արտանություններ*	3,708	*0.14%*	*0.04%*
1.15.	*Միկրոբիզնես*	29,596	*1.15%*	*0.28%*
2	Շահութահարկի գծով, այդ թվում՝	94,345	3.68%	0.90%
2.1.	*գյուղատնտեսություն, այդ թվում՝*	39,845	*1.55%*	*0.38%*
2.1.1.	*կազմակերպությունների շահույթից*	2,385	*0.09%*	*0.02%*
2.1.2.	*ֆիզիկական անձանց (Ա/Ձ-ների) շահույթից*	37,460	*1.46%*	*0.36%*

2.2.	*հարկվող շահույթի նվազեցման արտոնություններ, բացառությամբ՝ գյուղատնտեսության*	7,943	*0.31%*	*0.08%*
2.3.	*շահութահարկի նվազեցման արտոնություններ*	613	*0.02%*	*0.01%*
2.4.	*ԱԱՀ-ի շեմ*	27,058	*1.05%*	*0.26%*
2.5.	*միկրոբիզնես*	10,655	*0.42%*	*0.10%*
2.6.	*SS ոլորտի արտոնություններ*	8,232	*0.32%*	*0.08%*
3	Եկամտային հարկի գծով, այդ թվում՝	100,551	3.92%	0.96%
3.1.	*գյուղատնտեսության ոլորտի աշխատողների աշխատավարձ*	13,889	*0.54%*	*0.13%*
3.2.	*Հիպոտեկային վարկերի տոկոսների սպասարկման համար վերադարձված եկամտային հարկ*	71,965	*2.80%*	*0.69%*
3.3.	*SS ոլորտի արտոնություններ*	14,697	*0.57%*	*0.14%*
Ընդամենը		681,339	26.55%	6.49%

Անշուշտ, հարկային արտոնությունների տրամադրման հետևանքով բյուջետային եկամուտների կորուստը բավականաչափ մեծ ծավալ է կազմում՝ հատկապես ֆինանսական սուղ հնարավորությունների պայմաններում: Ընդ որում, հատկապես մտահոգիչ է այն իրողությունը, որ դրանց ծավալները վերջին տարիներին արձանագրում են աճի կայուն միտումներ:

Այս առումով, կարծում ենք, անհրաժեշտ է վերահիմաստավորել հարկային արտոնությունների դերն ու նշանակությունը հարկային կարգավորման գործում և ստեղծել այնպիսի նախադրյալներ, որոնց առկայության պարագայում միայն դրանք կապահովեն անհրաժեշտ սոցիալ-տնտեսական էֆեկտ: Մասնավորապես, անհրաժեշտ է ապահովել հարկային արտոնությունների առավելագույն հասցեականություն և բացառել տարբեր եղանակներով դրանցից անհիմն օգտվելու հնարավորությունը, իրականացնել հարկային ծախսերի չափի և ստացված սոցիալ-տնտեսական էֆեկտի համադրում՝ դրանց արդյունավետության գնահատման

և չհիմնավորված արտոնություններից հրաժարման նպատակով: Բացի այդ, հաշվի առնելով նաև հանրապետությունում ներկայումս ձևավորված հարկային ծախսերի ծավալը, կարծում ենք, ժամանակն է իրականացնել գործող հարկային արտոնությունների համակողմանի վերլուծություն դրանց տեսակներից յուրաքանչյուրի հիմնավորվածության, արդարացիության և սոցիալական ու տնտեսական նպատակահարմարության տեսանկյունից:

7. Առաջիկա բյուջետային տարում պետական բյուջեի ծախսային մասը կկազմի 3 տրիլիոն 017.4 մլրդ դրամ, ինչն ընթացիկ տարվա հաստատված ցուցանիշը գերազանցում է 426.5 մլրդ դրամով: Ինչ վերաբերում է բյուջետային ծախսերի կառուցվածքին, ապա ծախսերի ամբողջ ծավալի 77%-ը կամ 2.322.1 մլրդ դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, 23%-ը կամ 695.3 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերին:

2024 թվականին պլանավորվող ընդհանուր ծախսերի կառուցվածքում ամենամեծ մասնաբաժինը կունենան սոցիալական ոլորտի ծախսերը՝ 41. 7 տոկոս, ՀՆԱ-ի նկատմամբ ունենալով 12 տոկոս հարաբերակցություն (տես աղյուսակ 5-ը):

Աղյուսակ 5

ՀՀ 2020-2024թթ. պետական բյուջեների ծախսերը՝ ըստ ոլորտների (մլն. դրամ)

Ցուցանիշ	Փաստ			Բյուջե	Նախագիծ
	2020	2021	2022	2023	2024
Ընդամենը	1,894.6	2,004.3	2,242.6	2,591.0	3,017.3
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	30.6	28.7	26.4	27.8	28.7
1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ և պահուստային ֆոնդեր	344.3	381.0	407.4	549.4	689.6
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	5.5	5.5	4.8	5.9	6.6
Ընդհանուր ծախսերում (%)	18.2	19.0	18.2	21.2	22.9
2. Պաշտպանություն, հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	539.2	496.0	677.3	723.2	777.8
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	8.7	7.1	8.0	7.8	7.4

Ընդհանուր ծախսերում (%)	28.5	24.7	30.2	27.9	25.8
3. Տնտեսական ոլորտ	138.9	167.3	192.1	267.6	290.5
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.4	2.4	2.3	2.9	2.7
Ընդհանուր ծախսերում (%)	7.3	8.3	8.6	10.3	9,5
4. Սոցիալական ոլորտ	872.2	960.0	965.8	1,050.7	1,259.3
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	14.1	13.7	11.4	11.3	12.0
Ընդհանուր ծախսերում (%)	46.0	47.9	43.1	40.6	41.7

11. Նախագծով ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի դեֆիցիտը կկազմի շուրջ 340 մլրդ դրամ կամ ՀՆԱ 3.2տոկոսը, որի հետևանքով պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2024 թվականի վերջում կկազմի 48.4 տոկոս (տես աղյուսակ 6-ը): Դեֆիցիտի ֆինանսավորման ներքին աղբյուրների հիմնական մասը ՀՀ 2024 թվականին ձևավորվելու է պետական արժեթղթերի տեղաբաշխումից գոյացող մուտքերից, կայունացման դեպոզիտային հաշվի միջոցներից, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտներին տրամադրված բյուջետային վարկերի զուտ մուտքերից (տրամադրվածից հանած մարումները):

Աղյուսակ 6

ՀՀ 2020-2024թթ. պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (մլրդ դրամ)

Ցուցանիշներ	Փաստ			Բյուջե	Կանխատեսում
	2020	2021	2022	2023	2024
Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներն ու դրանց տարրերի անվանումները	334.0	320.5	179.5	288.9	341.1
Ա.Ներքին աղբյուրներ	359.4	101.2	288.1	302.8	220.3

Բ. Արտաքին աղբյուրներ	(25.4)	219.3	(108.6)	(13.9)	120.8

2024 թվականին արտաքին աղբյուրներից դեֆիցիտի ֆինանսավորումը կկազմի 120.8 մլրդ դրամ, իսկ ներքին աղբյուրներից՝ 220.3 մլրդ դրամ:

12. ՀՀ 2024թ. պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումների համաձայն 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ պետական պարտքը կկազմի 4,660 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 49.4%-ը, իսկ 2024 թվականի տարեվերջին այն կկազմի 5,318 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 50.7%-ը (տես աղյուսակ 7-ը):

2022-2023 թվականներին կշարունակվի 2021թ.-ից սկսված հարկաբյուջետային կոնսոլիդացիան, ինչի արդյունքում կառավարության պարտքը զգալիորեն կնվազի: 2022թ.-ին ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կկազմի 51.0%, իսկ 2023թ.-ին՝ 49.6%: Հատկանշական է այն, որ 2022թ.-ին ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նվազմանը նպաստող հիմնական գործոնները կլինեն բարձր տնտեսական աճը և դրամի փոխարժեքի արժևորումը, իսկ 2023թ.-ին՝ տնտեսական աճը:

Աղյուսակ 7.

Պետական պարտքի կառուցվածքը

	31.12.2022թ.	31.12.2023թ.	31.12.2024թ.
մլրդ դրամ			
ՀՀ պետական պարտք	4,187	4,660	5,318
այդ թվում՝			
արտաքին պետական պարտք	2,537	2,741	3,066
որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտք	217	222	236
ներքին պետական պարտք	1,650	1,918	2,252
տոկոսներով ՀՆԱ-ի նկատմամբ			
ՀՀ պետական պարտք	49.3	49.4	50.7
այդ թվում՝			
արտաքին պետական պարտք	29.9	29.1	29.2
որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտք	2.6	2.4	2.2

ներքին պետական պարտք	19.4	20.3	21.5

Ըստ կանխատեսումների՝ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կառավարության պարտքը կկազմի 5,082 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 48.4 տոկոսը և 2023 թվականի տարեվերջի համեմատությամբ ՀՆԱ-ի նկատմամբ կաճի 1.4 տոկոսային կետով (տես աղյուսակ 8-ը): Նշենք, որ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նշված կանխատեսումները տարբերվում են կառավարության պարտքի կառավարման 2024-2026 թվականների միջնաժամկետ ռազմավարական ծրագրով սահմանված ցուցանիշներից՝ պայմանավորված հիմնականում կանխատեսումներում կիրառված մակրոտնտեսական ու հարկաբյուջետային շրջանակի, փոխարժեքների տարբերություններով ու կառավարության պարտքի գծով գործառնություններով:

Աղյուսակ 8.

ՀՀ կառավարության պարտքը 2022-2024թթ.

	31.12.2022թ.	31.12.2023թ.	31.12.2024թ.
ՀՀ կառավարության պարտք, մլրդ դրամ	3,970	4,438	5,082
ՀՀ կառավարության պարտք, մլն ԱՄՆ դոլար	10,086	10,900	11,891
ՀՀ կառավարության պարտք, % ՀՆԱ-ի նկատմամբ	46.7	47.0	48.4

2024 թվականին Կառավարության պարտքի սպասարկման ծախսերը (տոկոսավճարներ) կկազմեն ՀՆԱ-ի 3.1%-ը կամ 322.2 մլրդ դրամ, ինչը 0.2 տոկոսային կետով կամ 49. մլրդ դրամով գերազանցում է 2023 թվականի ցուցանիշը (տես աղյուսակ 9-ը):

Աղյուսակ 9.

Կառավարության պարտքի սպասարկման ծախսերը (տոկոսավճարներ)

	2022թ.	*2023թ.*	*2024թ.*
Կառավարության պարտքի սպասարկում (տոկոսավճար), մլրդ դրամ	198.3	272.8	322.2
%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	2.3	2.9	3.1

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱԶՅԱՆ

Կատարողներ՝
բաժնի պետ՝ Ա. Թամազյան (հեռ.՝ 011 513-668)
գլխավոր մասնագետ՝ Գ. Կիրակոսյան (հեռ.՝ 011 513-603)
18.10.2023թ.

Սոցիալական փորձաքննության արդյունքները

«Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) քննարկվել է ՀՀ ԱԺ աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության սոցիալ, կրթական, առողջապահական փորձաքննության բաժնում:

Նախագիծը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությամբ, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև բյուջետային հարաբերությունները կարգավորող մյուս օրենքներով սահմանված պահանջներին:

Նախագծով՝ ՀՀ 2024 թվականի բյուջեն գնահատվում է՝

- եկամուտների գծով՝ 2,767.6 մլրդ դրամ,
- ծախսերի գծով՝ 3,108.7 մլրդ դրամ,
- դեֆիցիտը՝ 341.1 մլրդ դրամ:

Նախագծի ուսումնասիրության և քննարկման արդյունքում ձևավորվել են մի շարք նկատառումներ, որոնցից հիմնականները կայանում են հետևյալում:

1. Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին հանրապետությունում սոցիալական ոլորտի ծախսերը դրսևորել են աճի միտում (տես՝ աղյուսակը):

Սոցիալական ոլորտի 2020-2024թթ. բյուջետային ծախսերը, մլն դրամ

Ցուցանիշ	Փաստ			Բյուջե	Նախագիծ
	2020	2021	2022	2023	2024
Սոցիալական ոլորտ ընդամենը	872.2	960	965.8	1050.7	1259.3
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	14.1	11.8	11.4	11.3	12.0
Ընդհանուր ծախսերում (%)	46	42.6	43.1	40.6	41.7
1. Կրթություն	143.8	149.1	165.4	211.9	292.7
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.3	2.1	1.9	2.3	2.8
Ընդհանուր ծախսերում (%)	7.6	7.4	7.4	8.2	9.7
2. Սոցիալական պաշտպանություն	546.6	620	614.5	653.5	755.3
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	8.8	8.9	7.3.	7.0	7.2
Ընդհանուր ծախսերում (%)	28,8	30.9	27.4	25.2	25.0
3. Առողջապահություն	148.2	160.5	142.2	149.0	170.7
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.3	2.3	1.9	1.6	1.6
Ընդհանուր ծախսերում (%)	7.8	8	7.1	5.8	5.7
4. Հանգիստ, մշակույթ և կրոն	33.6	30.4	43.9	36.4	40.5
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.2	0.4	0.5	0.4	0.4
Ընդհանուր ծախսերում (%)	1.8	1.5	1.9	1.4	1.3

2020-2023թթ. ընթացքում ***կրթության ոլորտին*** ուղղված պետական միջոցները կազմել են համապատասխանաբար 143.8, 149.1, 165.4 և 211.9 մլրդ. ՀՀ դրամ: 2024թ. ոլորտի ֆինանսավորման համար հատկացվելիք 292.7 մլրդ. դրամը նախատեսվում է համամասնորեն ուղղել կրթության առանձին տեսակների՝ նախադպրոցական, տարրական, միջնակարգ, մասնագիտական, բարձրագույն, հետբուհական, ինչպես նաև կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ֆինանսավորմանը:

Առողջապահության ոլորտի ֆինանսավորումը 2020-2023թթ համապատասխանաբար կազմել է 148.2, 160.5, 122.2 և 149.0 մլրդ դրամ: 2024թ. ոլորտին ուղղվող ծախսերը նախորդ տարվա համեմատ ավելացել են 21 մլրդ. դրամով և պլանավորվում են 170.7 մլրդ դրամի չափով, որոնք ուղղվելու են հիմնականում առողջության համապարփակ ապահովագրության համակարգի ներդրմանը:

2020-2022թթ. ***սոցիալական պաշտպանության*** ոլորտի ֆինանսավորումն աճողական բնույթ է կրել՝ համապատասխանաբար կազմելով 546. 6, 620 և 614. 5 մլրդ դրամ: 2023 թվականին ոլորտին ուղղվող ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 84. 9 մլրդ դրամով: 2024թ. ոլորտի ֆինանսավորման աճի միտումը վերստին է դրսևորվում՝ կազմելով 755. 3 մլրդ. դրամ, որը, ինչպես և դիտարկվող տարիների ընթացքում, առաջնահերթ ուղղվելու է տարեցներին և հաշմանդամներին աջակցության տրամադրմանը, ինչպես նաև գործազրկության, սոցիալական հատուկ արտոնությունների, բնակարային ապահովման, ընտանեկան նպաստների տրամադրման և այլ սոցիալական ծառայությունների ապահովմանը: Բացի այդ, ոլորտի հատկացումները ուղղվելու են ծնելիության խթանմանը և բազմազավակ ընտանիքներին պետական աջակցության ցուցաբերմանը:

2. ՀՀ առողջապահության նախարարության գծով ՀՀ 2024 թվականի պետական բյուջեով նախատեսվում է հատկացնել **168,022.1** մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը):

Հատկացվելիք միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

- Հանրային առողջության պահպանում ծրագրի գծով 2024թ. նախատեսվել է 7,334.8 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության բացառումը և նվազեցումը, կառավարելի վարակիչ հիվանդությունների դեմ պայքարը:

- Առողջության առաջնային պահպանում ծրագրի գծով նախատեսվել է 31,629.6 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է բնակչությանը մատչելի և որակյալ առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը, առողջության վատթարացման ռիսկի գործոնների վերհանումը և դրանց հնարավոր անբարենպաստ ազդեցության կանխարգելումը:

- *Դեղապահովում ծրագրի գծով նախատեսվել է 4,630.0 մլն դրամ:*

Ծրագրի նպատակը դեղերի անվտանգության, արդյունավետության և որակի ապահովումն է, ՀՀ հիմնական դեղերի ցանկում առկա կենսականորեն անհրաժեշտ դեղերի ֆիզիկական և

տնտեսական մատչելիության բարձրացումը: Ծրագրի շրջանակներում նախատեսված հատկացումներն ուղղվելու են թվով 204840 շահառուներին՝ պետության կողմից անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքի տրամադրման համար, ապահովելով 13 հիվանդության ծածկույթ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել նաև թվով 167 հատ մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և բժշկական պարագաների բեռների ստացման, մաքսազերծման և պահպանման ծառայություններ:

- Մոր և մանկան առողջության պահպանում ծրագրի գծով նախատեսվել է 23,017.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է մոր և մանկան առողջության պահպանումը, կանանց և երեխաներին մատուցվող բժշկական ծառայությունների մատչելիության և որակի բարելավումը, որի արդյունքում ակնկալվում է մանկական և մայրական մահացության և հիվանդացության կրճատում, կանանց վերարտադրողական առողջության բարելավում:

- *Շտապ բժշկական օգնություն ծրագրի գծով նախատեսվել է 5,311.0 մլն դրամ:*

Ծրագրի նպատակն է մարդու կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող վիճակներում որակյալ շտապ բժշկական օգնության ծառայությունների տրամադրումը, որի արդյունքում նախատեսվում է բարելավել շտապ օգնության համակարգի պատրաստվածությունը, արձագանքման արագությունը, հասանելիության և բժշկական օգնության ծառայությունների որակը:

- Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում ծրագրի գծով նախատեսվել է 39,720.4 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է ոչ վարակիչ հիվանդությունների (մասնավորապես՝ սիրտանոթային, շաքարային դիաբետի և չարորակ նորագոյացությունների) բուժման արդյունավետության բարձրացումը: Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է նվազեցնել ոչ վարակիչ հիվանդություններով պայմանավորված հիվանդացությունը և մահացությունը:

- Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն ծրագրի գծով նախատեսվել է 38,648.2 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության հասանելիության և մատչելիության մակարդակի բարձրացումը, հիվանդանոցային որակյալ բժշկական օգնության ապահովումը:

Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման ծրագրի նպատակն է Առողջապահության համակարգի արդիականացումը և զարգացումը,

վարակիչ և բնակչության համար մեծ ռիսկ ներկայացնող հիվանդությունների (մալարիա, տուբերկուլյոզ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ և այլն) վաղ հայտնաբերումը, արդյունավետ հակազդումը և բժշկական օգնության ապահովումը:

Ծրագրի համար ՀՀ 2023թ. պետական բյուջեով նախատեսվել է 2,233.0 մլն դրամ, որից՝ վարկային և դրամաշնորհային միջոցների գծով 1,865.8 մլն դրամ, համաֆինանսավորման գծով՝ 367.2 մլն դրամ:

3. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գծով ՀՀ 2024 թվականի պետական բյուջեով նախատեսվում է հատկացնել 345,417.2 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը):

Միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը: Մասնավորապես.

- *Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ծրագրի գծով 2024 թվականին նախատեսվում է հատկացնել 15,401.8 մլն դրամ:*

Ծրագրի նպատակն է՝ աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության որակավորում ունեցող մասնագետների պատրաստումը, կրթության մատչելիության ապահովումը: Ծրագրով ծախսերը նախատեսվել են հանրապետության 21 արհեստագործական ուսումնարաններում արհեստագործական կրթության մեջ ընդգրկվող 8.0 հազար սովորողների, 68 հաստատություններում միջին մասնագիտական կրթության մեջ ընդգրկվող 20.2 հազար սովորողների ուսուցման գծով:

- *Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի գծով 2024 թվականին նախատեսվում է հատկացնել 14,202.1 մլն դրամ:*

Ծրագրի նպատակն է՝ ապահովել մատչելի, որակյալ և մրցունակ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն:

- *Հանրակրթության ծրագրի գծով 2024 թվականին նախատեսվում է հատկացնել 124,301.6 մլն դրամ:*

Ծրագրի նպատակն է՝ ապահովել անվճար և որակյալ հանրակրթություն: Ծրագրի շրջանակներում միջոցներ են նախատեսվել պարտադիր կրթության երեք մակարդակներում սովորողների ուսուցման գծով:

- *Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում ծրագրի գծով 2024 թվականին նախատեսվում է հատկացնել 3,767.7 մլն դրամ:*

Ծրագրի նպատակն է՝ յուրաքանչյուր երեխայի համար կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովում՝ զարգացման առանձնահատկություններին համապատասխան և անհրաժեշտ պայմանների ստեղծման միջոցով:

- *Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրի գծով 2024 թվականին նախատեսվել է 32,321.5 մլն դրամ:*

Ծրագրի նպատակն է՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար, կիրառական և թեմատիկ հետազոտությունների իրականացում, ենթակառուցվածքի և ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում և զարգացում, գիտական ներուժի վերարտադրության ապահովում:

- *Սպորտի համար նախատեսված հատկացումներն ուղղվելու են 2 ծրագրերի իրականացմանը:*

Մեծ նվաճումների սպորտ ծրագրի համար 2024 թվականին նախատեսվում է հատկացնել 3,984.0 մլն դրամ: Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում մեծ սպորտի շարունակական զարգացմանը և միջազգային հարթակներում ՀՀ դիրքի բարելավմանը:

Մասսայական սպորտ ծրագրի համար 2024 թվականին նախատեսվում է հատկացնել 2,672.8 մլն դրամ: Ծրագրի նպատակն է ապահովել բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորումը, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացումը:

Երիտասարդության ծրագրի համար 2024 թվականին նախատեսվում է հատկացնել 2,331.9 մլն դրամ: Ծրագրի նպատակն է նպաստել սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքին երիտասարդների լիարժեք ներգրավմանը և նրանց ստեղծագործական ներուժի ամբողջական դրսևորմանը:

4. Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրի նպատակն է՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար, կիրառական և թեմատիկ հետազոտությունների իրականացում, ենթակառուցվածքի և ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում և զարգացում, գիտական ներուժի վերարտադրության ապահովում:

*Ծրագրով 2024 թվականին նախատեսվել է **32,321.5 մլն դրամ:***

2024 թվականին նախատեսվում են իրականացնել նաև գիտական կենտրոնների վերանորոգումը և գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինումն ու համատեղ օգտագործման գիտական սարքավորումների կենտրոնների ստեղծումը:

5. Մշակույթի ոլորտի համար նախատեսված հատկացումներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը:

- Կինեմատոգրաֆիայի ծրագրի համար 2024 թվականին նախատեսվում է հատկացնել 849.7 մլն դրամ:

- Մշակութային ժառանգության ծրագրի համար 2024 թվականին նախատեսվում է հատկացնել 5,065.1 մլն դրամ:

- Գրահրատարակչության և գրադարանների ծրագրի համար 2024 թվականին նախատեսվում է հատկացնել 1,788.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է նպաստել գրականության հրատարակմանը, տարածմանը և հանրահռչակմանը:

- Արվեստների ծրագրի համար 2024 թվականին նախատեսվում է հատկացնել 10,991.0 մլն դրամ:

Ծրագրի նպատակն է նպաստել ազգային հենքի վրա ժամանակակից թատերարվեստի, երաժշտարվեստի, կերպարվեստի և պարարվեստի զարգացմանն ու հանրահռչակմանը:

6. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության գծով նախատեսվում է հատկացնել 8,792.6 մլն դրամ (ներառյալ կառավարման ապարատի պահպանման ծախսերը), որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

- *Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ ծրագրի գծով 2024 թվականին նախատեսվել է 2,270.7 մլն դրամ:*

Ծրագրի նպատակն է նպաստել շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների) պահպանությանը՝ վերջինիս վերաբերյալ տեղեկատվության հրապարակմամբ:

- *Բնապահպանական ծրագրերի իրականացում համայնքներում ծրագրի գծով 2024 թվականին նախատեսվել է 322.6 մլն դրամ:*

Ծրագրի նպատակն է մեղմել հանքարդյունաբերության ոլորտում տնտեսական գործունեության հետևանքով շրջակա միջավայրին և բնակչության առողջությանը պատճառված վնասները:

- *Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում և պահպանում ծրագրի գծով 2024 թվականին նախատեսվել է 2,030.6 մլն դրամ:*

Ծրագրի նպատակն է ապահովել բնական պաշարների և կենսաբազմազանության արդյունավետ կառավարումն ու պահպանությունը՝ ակնկալելով ապահովել բնական պաշարների և կենսաբազմազանության վերարտադրության աճը:

- *Անտառների կառավարում ծրագրի գծով 2024 թվականին նախատեսվել է 2,812.7 մլն դրամ:*

Ծրագրի նպատակն է ապահովել անտառային տարածքների կայուն կառավարումը՝ նպաստելով կայուն կառավարվող անտառային տարածքների աճին:

- *Բնապահպանական նմուշների պահպանություն և ցուցադրություն ծրագրի գծով 2024 թվականին նախատեսվել է 42.5 մլն դրամ:*

Ծրագրի նպատակն է մշտական և ժամանակավոր ցուցահանդեսների միջոցով հավաքածուները ներկայացնել հանրությանը և իրականացնել բնապահպանական քարոզչություն՝ նպաստելով բնապահպանական աշխարհայացքի ձևավորմանը, բնակչության էկոլոգիական դաստիարակությանը:

7. Անապահով սոցիալական խմբերին աջակցություն ծրագրի գծով 2024 թվականին նախատեսվում է 30,397.2 մլն դրամ:

Ծրագրի վերջնական արդյունքը՝ օժանդակել անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանը, դրանով մեղմելով աղքատությունը և կրճատելով ծայրահեղ աղքատությունը: 2024 թվականի պետական բյուջեով՝ ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղվող նպաստի գծով նախատեսվում է 29,915.5 մլն դրամ, որի շրջանակներում նպաստ կտրամադրվի շուրջ 76000 ընտանիքի, իսկ նպաստի միջին ամսական չափը կկազմի շուրջ 32,000 դրամ:

Սոցիալական փաթեթների ապահովում ծրագրի վերջնական արդյունքը պետական մարմինների աշխատակիցների կյանքի որակի բարելավումն է՝ սոցիալական երաշխիքների ապահովման և աշխատանքային մոտիվացիայի բարձրացման նպատակով:

2024 թվականի համար նախատեսվում է 10,619.5 մլն դրամ՝ 147493 շահառուի հաշվարկով:

Ընդհանուր առմամբ, կարծում ենք, որ 2024 թվականի պետական բյուջեի նախագծով սոցիալական, կրթական և առողջապահական բնագավառներին նախատեսված հատկացումները կնպաստեն այդ ոլորտներում առկա մի շարք հիմնախնդիրների լուծմանը և դրված նպատակների ձեռքբերմանը:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Լ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կատարողներ՝

գլխավոր մասնագետ Ա. Գալստյան (հեռ. 011-513-235), (12-35)

առաջատար մասնագետ Մ. Դալլաքյան

18.10.2023թ.